

ՀՀ ԵԱՏՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՊՐԱՆՔԱՄԲԵՐԻ

Հոդվածը ստացվել է՝ 10.03.25, ուղարկվել է գրախոսման՝ 15.05.25, երաշխավորվել է տպագրության՝ 11.07.25

ՀՄԱՅՈՒՄ ԵՎ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ներածություն: Հայաստանի ԵԱՏՄ անդամակցության արդյունավետության մասին կան տարբեր մոտեցումներ, որոնք, որպես կանոն, չեն շոշափում տնտեսական բաղադրիչը և հիմնվում են քաղաքական պնդումների վրա, հետևաբար **արդիական** է տվյալ թեմայի ուսումնասիրությունը: Այնուամենայնիվ ինչպիսի կարծիքներ էլ հնչեն այս փաստի վերաբերյալ, տնտեսական արդյունքները դրանից չեն փոխվում:

Այս **հետազոտության նպատակն** է բացահայտել Հայաստանի ԵԱՏՄ անդամակցության տնտեսական արդյունքները և համեմատել որևէ միության չանդամակցելու իրավիճակի հետ, որպեսզի պարզվի իրական տնտեսական արդյունքը:

Ուստի **խնդիր** է դրվել իրականացնել տնտեսական այնպիսի ուսումնասիրություն, որը թույլ կտա ասել, թե իրականում ինչ և ինչքան է շահել Հայաստանը ԵԱՏՄ մուտք գործելով 2015թ.-ի հունվարի 2-ից:

Այսինքն՝ վեր հանել արտաքին առևտրի բաղադրիչներ կազմող հիմնական ապրանքատեսակների ցանկը ըստ ԱՏԳ կոդերի, ուսումնասիրել և պարզել դրանց միջինացված մաքսատուրքերի չափերը, համեմատել այդ ապրանքատեսակների ԵԱՏՄ և ԱՀԿ մաքսատուրքերը և համեմատել ԵԱՏՄ-ից ստացվող մաքսատուրքերի Հայաստանին բաժին ընկնող մասի հետ ու կազմել նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն:

Վերլուծության համար օգտագործվել են 2023թ.-ի ԵԱՏՄ երկրներ ներմուծման և արտահանման տվյալները, որոնք քաղվել են Հայաստանի վիճակագրական կոմիտեի հրապարակումներից: Մասնավորապես ուսումնասիրվել են հիմնական արտահանվող և ներկրվող ապրանքները, որոնք կազմել են ընդհանուրի 70 տոկոսը: Հաշվի են առնվել տվյալ ապրանքների ԵԱՏՄ մաքսատուրքերի դրույքաչափերը և համեմատվել ԱՀԿ մաքսատուրքային դրույքաչափերի հետ:

Գրականության վերլուծություն: Ներկայացված հարցը Հայաստանի Հանրապետության Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) անդամակցման նպատակահարմարության և արդյունավետության շուրջ տարբեր կարծիքների առկայությունն է: Փորձագետների մի մասը պնդում է, որ ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունը հանդիսանում է տնտեսական աճի ապահովման հիմնական գործոնը: Նրանք նշում են, որ անդամակցությունը ԵԱՏՄ-ին թույլ է տալիս առանց որևէ սահմանափակման մուտք գործել 180 միլիոն բնակչություն ունեցող համատեղ շուկա, ինչն իր հերթին կարող է նպաստել արտահանման ծավալների ընդլայնմանը, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների ներգրավման աճին: Միևնույն ժամանակ, մյուս փորձագետները

նշում են, որ ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունը բերում է կորուստների՝ հատկապես Եվրամիության հետ տնտեսական կապերի խորը զարգացման և ինտեգրման հնարավորության հեռացման տեսանկյունից: Նրանք կարծում են, որ Հայաստանի եվրոպական գործընկերների հետ համագործակցության խոչընդոտումը կարող է հանգեցնել տնտեսական կայուն զարգացման և ներդրումների ներգրավման հնարավորությունների սահմանափակման, ինչպես նաև արևմտյան զարգացած երկրներից մատչելի արտաքին վարկային ռեսուրսների ձեռքբերման կորուստի: Ավելին, նրանց կարծիքով, ԵԱՏՄ-ին անդամակցությունը կարող է բերել նոր սպառնալիքներ՝ կապված տնտեսական անվտանգության ապահովման հետ, ինչը պարտավորեցնում է մանրակրկիտ վերլուծություն և երկարաժամկետ ռազմավարական ընտրություն:¹

ԵԱՏՄ երկրների ՀՆԱ-ի մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում, հաշվարկված ըստ PPP-ի՝ գրեթե 3% է:²

ԵԱՏՄ համաձայնագրում ներառված էին հետևյալ նպատակները.

- բնակչության կենսամակարդակի բարելավման համար պայմանների ստեղծումը.

- ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատանքի միասնական շուկայի ձևավորում, բարեփոխումներ

- միության ներսում առկա ռեսուրսները;

- համաշխարհային տնտեսության համատեքստում տնտեսությունների մրցունակության բարձրացումը, տնտեսություն:³

Արտաքին առևտուրը երկրի առևտրային հարաբերություններն են այլ երկրների հետ, որոնք ներառում են ապրանքների ներմուծումը և արտահանումը: Արտաքին առևտրային հարաբերությունների ամբողջությունը տարբեր երկրների միջև ձևավորում է միջազգային առևտուր: Այնուամենայնիվ, արտաքին առևտրի հայեցակարգի մասը ԵԱՏՄ-ում վերաբերում է միայն երրորդ երկրներին, այսինքն՝ վաճառված և արտադրված ապրանքների հետ կապված գործառնությունների համար ինտեգրման տարածքից դուրս: Մնացած ապրանքներ, որոնք կողմերի համար առևտրի առարկա են ԵԱՏՄ երկրներից որևէ մեկը համարվում է «ԵԱՏՄ ապրանքների» հատուկ կատեգորիա, և նրանց հետ գործարքները այլևս չեն համարվում արտաքին: Այսպիսով, ԵԱՏՄ շրջանակներում միջազգային առևտրի շրջանառությունը հաշվապահության

¹ Միսակ Ավագյան, Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների հետ Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական կապերի վերլուծությունը, Բանբեր 2016 <https://banber.eiu.am/index.php/banber/article/view/33/196>

² В.И. Самаруха, 2019г., К вопросу об экономическом развитии еаэс, актуальные проблемы развития ЕАЭС в условиях современных глобальных изменений, Материалы Всероссийской научно-практической конференции, Иркутск, 12 декабря, стр 77

³ К.А. Татарникова, Повышение экономической безопасности стран ЕАЭС посредством повышения финансовой безопасности с учетом мирового опыта, актуальные проблемы развития ЕАЭС в условиях современных глобальных изменений, Материалы Всероссийской научно-практической конференции, Иркутск, 12 декабря 2019г., стр 93

տեսանկյունից և Գնահատումը բաժանված է երկու մասի՝ արտաքին առևտուր, որը ներառում է երրորդ երկրների հետ գործարքները և փոխադարձ միջպետական առևտուր, որը հաշվի է առնում երկրների միջև գործարքները Միության անդամների կողմից: Առևտրի կարևոր տարր է ԵԱՏՄ անդամ պետությունների միջև համաձայնագիրը համաձայնություն նախապայման համարվող ապրանքների տեսականու վերաբերյալ փոխադարձ առևտրային գործարքների միջոցով: Մնացած բոլորը - այս կատեգորիային չհամապատասխանող տարբերակները դասակարգվում են որպես առարկայական արտաքին առևտրային գործարքներ:⁴

Հայաստանի, ԵԱՏՄ անդամ երկրներից ՌԴ-ի և Բելառուսի, ինչպես նաև ոչ ԵԱՏՄ անդամ Վրաստանի հարկերի և այլ վճարումների ընդհանրացված դրույքաչափերի, ինչպես նաև հարկային եկամուտների շարժի տոկոսը ՀՆԱ նկատմամբ և վարկային ու ավանդական տոկոսադրույքի սպրեդի ուսումնասիրությունից (2010-2020թթ..) բխում է, որ Հայաստանի ու որ ԵԱՏՄ երկիր Վրաստանի տնտեսական ցուցանիշների որևէ արտահայտիչ տարբերություն չի առաջացել Հայաստանի ԵԱՏՄ անդամակցությունից և դրանից առաջ: Սա իր հերթին նշանակում է, որ Հայաստանում տնտեսական ցուցանիշների բարելավումները չպետք է որևէ կախում ունենան ԵԱՏՄ-ից: Տվյալ ցուցանիշների վերլուծությունը ի լրումն մնացածին, ցույց է տալիս, որ Հայաստանը որևէ ակնհայտ առավելություն չի ստացել ԵԱՏՄ-ին անդամակցելով, չնայած, որ ընդհանուր բնութագիրը հետազայում ունի տեսանելի առավելությունների ձեռքբերման հեռանկար:⁵

Մեթոդաբանություն: Հոդվածում կատարվել է վերլուծություն թե Հայաստանում ինչպիսի եկամտային խմբերի համար ձեռնտու կլինի ԵԱՏՄ-ի կազմից դուրս գալը, և հակառակը: Ենթադրվել է, որ որևէ միություն լքելը կամ անդամակցելը չի բերի որևէ քաղաքական ազդեցությունների, ուստի հաշվի են առնվել միայն գործող մաքսատուրքերի տարբերություններից բխող փոփոխությունները:

Վերլուծություն: Վերլուծության համար հիմք են ընդունվել 2023 թվականի տվյալները, որպես մի կողմից հնարավորինս թարմ և մյուս կողմից առանց ձգնաժամային շոկերի ենթարկված տվյալներ: 2023-ին Հայաստանի արտաքին առևտուրից ներմուծումները կազմել են 12,76մլրդ ԱՄՆ դոլար: ԵԱՏՄ երկրներից ներկրումը կազմել է 4.5մլրդ ԱՄՆ դոլար, իսկ մնացած 8.3մլրդ-ը՝ մնացած

⁴ Попов Валерий Владимирович, Нефёдова Яна Михайловна , “Экономико-статистический анализ внешнеторгового оборота государств-членов ЕАЭС”, «Молодой учёный» . № 5 (139) . Февраль 2017 г. Стр. 226

⁵ Արսեն Ըռքոյան, 2022/ «ՀՀ և տարածաշրջանային երկրների տնտեսական կարևոր գործոնների համեմատական վերլուծությունը», Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու 1, էջ 119

երկրներից: Արտահանման մասով ԵԱՏՄ երկրներ է արտահանվել 3.7մլրդ, իսկ մնացած երկրներ՝ 5.2մլրդ ԱՄՆ դոլարի ապրանքներ:⁶

Արտահանում: Մասնավորապես ԵԱՏՄ երկրներ արտահանման առաջին տասնյակում են հետևյալ 85 (Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր), 87 (Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմը, դրանց մասեր և սարքավորումներ), 66 (Հովանոցներ, նստափայտեր, ճիպոտներ, մտրակներ և դրանց մասեր), 71 (Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ), 90 (Օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ), 22 (Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ), 08 (Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ), 26 (Հանքաքար, խարամ և մոխիր), 61 (Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով), 72 (Սև մետաղներ) ԱՏԳ թվերին համապատասխանող ապրանքները: Այս ապրանքները կազմում են արտահանման շուրջ 70 տոկոսը:

Արտահանվող ապրանքներին առանձին անդրադառնալու դեպքում ստացվում է հետևյալ պատկերը.

85 - ԱՏԳ կոդերով ապրանքները վերաբերվում են տեխնիկային և էլեկտրական մեքենաներին, որոնք ՌԴ են արտահանվում վերջինիս դեմ կիրառված պատժամիջոցների պատճառով և չեն հանդիսանում հայկական արտադրության ապրանք, ուստի սա կրելու է ժամանակավոր բնույթ:

87 - ԱՏԳ կոդերով ապրանքները վերաբերվում են ավտոմեքենաներին, որոնց համար ՀՀ-ն ուներ ժամանակավոր ներկրելու արտոնություն և այդ մեքենաները գնում էին ԵԱՏՄ այն երկրներ, որոնք չունեին այդ արտոնությունը: Հետևաբար՝ սա նույնպես ոչ մի դեպքում նույնիսկ մասամբ չէր կարող առնչվեր հայկական արտադրանք լինելու հետ և ինչպես նախորդ ապրանքները ուներ ժամանակավոր բնույթ:

66 - ԱՏԳ կոդերով ապրանքները՝ ձեռնափայտեր և ձիարշավարանային ատրիբուտներ, որոնք պատրաստված են փայտից և կաշվից:

71 - ԱՏԳ կոդերով ապրանքները վերաբերվում են ադամանդներին, թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերին և ոսկյա զարդերին, որոնք Հայաստան են ներմուծվում, այնուհետև վերամշակվելուց ու հավելյալ արժեք ստանալուց հետո արտահանվում ԵԱՏՄ երկրներ՝ հիմնականում Ռուսաստան, ինչպես նաև այլ ոչ ԵԱՏՄ անդամ երկրներ:

90 - ԱՏԳ կոդերով ապրանքները վերաբերվում են օպտիկական ապրանքների, ինչպես նաև էլեկտրականության ու հեղուկ գազի չափման և

⁶ Արտաքին առևտրի բազա, անվանացանկի երկնիշ դասակարգման, Ինչպես նաև ԿԶՆ տվյալներ, անվանացանկերի քառանիշ տվյալների օգտագործում: Վերջին մուտք 07.05.2025թ. <https://armstat.am/am/>

հղկման սարքավորումներին, որոնց օգտագործումը կապված է էլեկտրականությունով և հեղուկ գազով աշխատող ավտոմեքենաների հետ:

22 – Կոնյակի արտահանումը զբաղեցնում է խմիչքների արտահանման առաջատարի դիրքը 43-ին ԱՄՆ դոլար /2023/թ. Այս մթերքի շուկան օլիգոպոլ է Հայաստանում և կազմված է 3 հիմնական արտադրողներից և երկու տասնյակ փոքր արտադրողներից, որոնք զբաղեցնում են շուկայի 20 տոկոսից պակաս մասը:

08 - Չրեր, չամիչ, ձմերուկ և սեխ արտահանող կազմակերպությունը Սպայկա-ն է, որը զբաղեցնում է մոնոպոլ դիրք, սակայն իր ծառայությունների միջոցով ֆերմաներին միջնորդում է արտահանման շուկաներ բարձր գներով և միայն հատընտիր ապրանքը վաճառելու համար:

61 - Կոստյում, ներքնագգեստ, սվիտեր, մանկական հագուստ, գուլպա, ձեռնոց, Հիմնական արտադրողն է ԱԼԵՔՍ Գրուպ-ը:

72 - Երկաթամիահավածք, երկաթե և ածխածնային պողպատե ձուլակտոր, Երկաթե և ածխածնային պողպատե կիսապատրաստուկ (0.25% ածխածին պարունակող), այսինքն՝ սև մետաղների հանքարդյունաբերության որոշ անմշակ կամ մասնակի մշակված ապրանք:

26 - Հանքաքար, խարամ և մոխիր: Հիմնականում արտահանվում է Պղնձի, մոլիբդենի, թանկարժեք մետաղների և ցինկի հանքաքարերը:⁷

Ներկրում: ՀՀ հիմնական ներկրվող ապրանքներն են.

ԱՏԳ կողեր – 71, 87, 85, 84, 27, 39, 72, 73, 90, 94, 76, 48, 40, 33, 32, 30, 24, 2,⁴⁸:

71 - ԱՏԳ կողերով ապրանքները վերաբերվում են ադամանդներին, թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերին և ոսկյա զարդերին, որոնք Հայաստան են ներմուծվում, այնուհետև վերամշակվելուց ու հավելյալ արժեք ստանալուց հետո արտահանվում ԵԱՏՄ երկրներ՝ հիմնականում Ռուսաստան, ինչպես նաև այլ ոչ ԵԱՏՄ անդամ երկրներ:

87 - ԱՏԳ կողերով ապրանքները վերաբերվում են ավտոմեքենաներին, որոնց համար ՀՀ-ն ունեւ ժամանակավոր ներկրելու արտոնություն և այդ մեքենաները գնում էին ԵԱՏՄ այն երկրներ, որոնք չունեին այդ արտոնությունը: Հետևաբար՝ սա նույնպես ոչ մի դեպքում նույնիսկ մասամբ չէր կարող առնչվեր հայկական արտադրանք լինելու հետ և ինչպես նախորդ ապրանքները ուներ ժամանակավոր բնույթ:

85 - ԱՏԳ կողերով ապրանքները վերաբերվում են տեխնիկային և էլեկտրական մեքենաներին, որոնք ՌԴ են արտահանվում վերջինիս դեմ կիրառված պատժամիջոցների պատճառով և չեն հանդիսանում հայկական արտադրության ապրանք, ուստի սա կրելու է ժամանակավոր բնույթ:

⁷ Արտաքին առևտրի բազա, անվանացանկի երկնիշ դասակարգման, Ինչպես նաև ԿԶՆ տվյալներ, անվանացանկերի քառանիշ տվյալների օգտագործում: Վերջին մուտք 07.05.2025թ. <https://armstat.am/am/>

⁸ TH BՅԸ EAՅC և ETT EAՅC, <https://eec.eacunion.org/comission/department/catr/ett/>

84 - Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր

27 - Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր

39 - Պլաստմասսա և դրանից իրեր՝ պոլիէթիլեն, պոլիպրոպիլեն, ստիրոլի մոլիմեր /պոլիստերոլ/, պոլիմերային շինանյութ

72 - Երկաթամիահավածք, երկաթե և ածխածնային պողպատե ձուլակտոր, Երկաթե և ածխածնային պողպատե կիսապատրաստուկ (0.25% ածխածին պարունակող), այսինքն՝ սև մետաղների հանքարդյունաբերության որոշ անմշակ կամ մասնակի մշակված ապրանք:

73 - Իրեր սև մետաղներից՝ կոնստրուկցիաների և շինարարական ու արտադրական նշանակության տարբեր երկաթյա կլոր ու քառանկյուն գլանակներ և այլն

90 - ԱՏԳ կողերով ապրանքները վերաբերվում են օպտիկական ապրանքների, ինչպես նաև էլեկտրականության ու հեղուկ գազի չափման և հոկման սարքավորումներին, որոնց օգտագործումը կապված է էլեկտրականությունով և հեղուկ գազով աշխատող ավտոմեքենաների հետ:

94 - Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր: Հիմնականում ներկրվում է լամինատ Ռուսաստանից:

76 - Այլումին և իրեր դրանից: Այլումինի իրերը հիմնականում ներկրվում են, սակայն կա փոքր ծավալի արտահանում, որը կարող է կապված լինել վերաարտահանման հետ, չնայած Հայաստանում կա այլումինի մշակման գործարան:

48 - Թուղթ և ստվարաթուղթ, դրանցից պատրաստված իրեր: Հիմնականում ներկրվում է գրագրության համար նախատեսված սպիտակ թուղթը:

40 - Կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր: Այստեղ հիմնականում խոսքը վերաբերվում է մեքենաների անվադողերին:

33 - Եթերային յուղեր, հարդարանքի և լոգարանային միջոցներ

32 - Ներկանյութեր, պիգմենտներ և այլ ներկող նյութեր, լաքեր, թանաք

30 - Դեղագործական մթերք

24 - Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ

4 - Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք

2 - Միս և մսից ենթամթերք

Այս բոլոր ապրանքները Հայաստանի Հանրապետությունը ընդունում էր 0 կամ 5 տոկոս մաքսատուրքով մինչև ԵԱՀԿ անդամ լինելը, քանի որ մասնակցում էր Առևտրի Համաշխարհային Կազմակերպությունում որպես անդամ:⁹ Սակայն

⁹ ՄԱԿ-ի «UN COMTRADE DATABASE» առցանց տվյալների բազա (<http://comtrade.un.org/data/>): Договор о зоне свободной торговли от 18 октября 2011 года

լինելով ԵԱՏՄ երկիր այժմ ներկրման համար ունի աղյուսակ 1-ում պատկերված բազային մաքսատուրքերը, նաև հաշվի առնենք, որ ԵԱՏՄ-ից դուրս գալու դեպքում դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանելու դեպքում կլինեն գործող մաքսատուրքերը Հայաստանի համար:

Աղյուսակ 1

Հիմնական ներմուծվող ապրանքներ¹⁰

ԱՏԳ կոդեր	ԵԱՏՄ բազային մաքսատուրքեր %	ԱՀԿ բազային մաքսատուրքեր %	Մաքսատուրքերի տարբերություն
2	25	5	15
4	15	5	10
24	2 եվրո տուփը	5	-/-
27	5	5	0
30	4	5	-1
32	5	0	0
33	6.5	5	1.5
39	6.5	5	1.5
40	10	5	5
48	5	5	5
71	15	5	10
72	5	5	5
73	7.5	5	2.5
76	0	0	0
84	0	0	0
85	0	0	0
87	20	5	15
90	5	5	0
94	12.5	5	7.5

(<http://cis.minsk.by/reestr/ru/index.html#reestr/view/text?doc=3183>):

Հաշվարկներն

իրականացվել են հեղինակի կողմից:

¹⁰ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից, հիմնվելով <http://cis.minsk.by/reestr/2/doc/3183#text>, TH BՅԸ ԵԱՅՇ և ETT ԵԱՅՇ, <https://eec.eaeunion.org/comission/departement/catr/ett/> տվյալների վրա:

Հիմնական արտահանվող ապրանքներ¹¹

ԱՏԳ կոդեր	ԵԱՏՄ դրույքաչափեր
08	5
22	1.5ելվրո/լիտր
26	3
61	14
71	15
72	5
85	0
87	20
90	5

Ըստ աղյուսակի տվյալների ներմուծվող ապրանքները ոչ ԵԱՏՄ երկրներից կազմում են ներմուծումների շուրջ 75 տոկոսը և դա նշանակում է, որ ներմուծելով ԱՀԿ սակագներով դրանց գինը կդառնա ավելի մատչելի: Օրինակ՝ ներմուծվող մսի և մսամթերքի գները կիջնեն 15 տոկոսով, սև մետաղից իրերը՝ 2.5 տոկոսով, կաթ կաթնամթերքը, թռչնի ձվերը, մեղրը և այլ կենդանական մթերքները 10 տոկոսով, դեղորայքը և դեղագործական իրերն նույնիսկ կարող են ունենալ զրոյական մաքսատուրք, և այլն: Ամեն դեպքում այս փոփոխությունը կբերի ներմուծվող և հասարակության պահանջարկը վայելող ապրանքների գների զգալի նվազեցմանը:

Մյուս կողմից ԵԱՏՄ երկրներ արտահանման համար կառաջանա մաքսատուրք: Այսինքն՝ այժմ գործող զրոյական մաքսատուրքին կփոխարինեն ԵԱՏՄ երրորդ երկրներից ներմուծվող ապրանքների մաքսային սակագները: Օրինակ՝ Կոնյակ արտահանողը ստիպված կլինի մուծել 1.5ելվրո ամեն արտահանվող լիտրի դիմաց, սակայն հաշվի առնելով կոնյակի գինը, կարելի է ասել, որ այդ տարբերությունը լիտրի գնի մեջ 10 տոկոս էլ չի կազմում: Կառաջանա հանքաքարերի մաքսատուրք, նաև դժվար կլինի կազմակերպել թանկարժեք քարերի ու հագուստ արտահանումը ԵԱՏՄ: Այնուամենայնիվ ԵԱՏՄ երկրներ արտահանվող գրեթե բոլոր ապրանքները արտադրվում են խոշոր կազմակերպությունների կողմից: Կոնյակի շուկայում հիմնական խաղացողները՝ երեք խոշոր կազմակերպություններ են, հագուստինը՝ մեկը, պղինձ և մոլիբդենը՝ մեկը: Կան նաև վերաարտահանվող ապրանքներ, որը տնտեսության իրական հատվածի հետ որևէ կապ չունի և կրում է ժամանակավոր բնույթ: Արտահանվում են նաև ոչ մեծ կազմակերպությունների արտադրանքներ: Մասնավորապես դա

¹¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից, հիմնվելով <http://cis.minsk.by/reestr2/doc/3183#text>, TH BՅԸ EAՅC և ETT EAՅC, <https://eec.eaeunion.org/comission/departement/catr/ett/> տվյալների վրա:

գյուղատնտեսության մշակաբույսերի և չրերի ենթադրորտն է: Այստեղ կարող է լինել 5 տոկոս մաքսատուրք, որը հնարավոր է կլանեն հենց արտադրողները: Այստեղ կարող է պահանջվել պետական միջամտություն զարգացման ծրագրերի միջոցով, որը պետք է նպատակ ունենա կրճատել ինքնարժեքները, ինչպես նաև նոր շուկաներ մուտք գործելու հնարավորությունների բացահայտման և խթանման ուղղությամբ:

Ղրղզստանի Հանրապետության Եվրասիական տնտեսական միության մասին 2014թ.-ի մայիսի 29-ի պայմանագրին միանալու կապակցությամբ մաքսային տուրքերի գումարների բաշխման նորմատիվի չափը ՀՀ-ի դեպքում դարձել էր 1.11%¹² (1.13%-ի փոխարեն)¹³: Միայն 2013թ.-ին ՌԴ ներմուծումը կազմել էր մոտ 315 մլրդ ԱՄՆ դոլար¹⁴: Հաշվի առնելով, որ տարբեր երկրների համար մաքսատուրքի սակագները տարբերվում էին միասնական մաքսային սակագներից (կախված նրանից, թե արդյո՞ք այդ ապրանքը ներառված էր այն ապրանքների ցանկում, որոնց ներմուծման ժամանակ տրամադրվում են սակագնային արտոնություններ, երբ որպես վերջիններիս ծագման երկիր համարվում են զարգացող և առավելապես թույլ զարգացած երկրները)¹⁵, հիմք ընդունելով Օ. Շեպոտիլոյի և Դ. Թարրի (2012թ.) մեթոդաբանությունը (և ՌԴ միջին կշռված մաքսատուրքի դրույքաչափի վերաբերյալ իրենց կողմից 2013թ.-ին տրված գնահատականը¹⁶) մենք հաշվարկել ենք, որ եթե ՀՀ-ն 2013թ.-ին լիներ մաքսային միության անդամ, ներմուծման մաքսային տուրքերի գումարների բաշխումից ստացվող ՀՀ պետական բյուջեի եկամուտները (միայն ՌԴ ներմուծման ծավալներով պայմանավորված) կկազմեին մոտ 260 մլն ԱՄՆ դոլար: 2014թ.-ին

¹² Договор о присоединении Кыргызской Республики к Договору о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 года.

¹³ Приложение N 2 к Договору о присоединении Республики Армения к Договору о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 года, п.1:

¹⁴ ՄԱԿ-ի «UN COMTRADE DATABASE» անցանց տվյալների բազա (<http://comtrade.un.org/data/>): Договор о зоне свободной торговли от 18 октября 2011 года (<http://cis.minsk.by/reestr/ru/index.html#reestr/view/text?doc=3183>): Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

¹⁵ Протокол О единой системе тарифных преференций таможенного союза от 12 декабря 2008 года. Решение Межгосударственного Совета Евразийского экономического сообщества (высшего органа таможенного союза) от 27 ноября 2009 г. №18. Решение Комиссии таможенного союза от 27 ноября 2009 года №130. Соглашение о единых правилах определения страны происхождения товаров от 25 января 2008 года. Соглашение о правилах определения происхождения товаров из развивающихся и наименее развитых стран от 12 декабря 2008 года. Портал внешнеэкономической информации Министерства экономического развития РФ, <http://www.ved.gov.ru/eng/activities/system/ MARGINS ???>

¹⁶ Shepotylo, Oleksandr and Tarr, David G. (2012). “Impact of WTO Accession and the Customs Union on the Bound and Applied Tariff Rates of the Russian Federation,” Policy Research Working Paper 6161, World Bank, Washington D.C.: United States, p.4, 24.

ՌԴ ներմուծման ծավալները կազմել էին 286.7 մլրդ ԱՄՆ դոլար¹⁷, որը հիմնականում պայմանավորված էր սահմանված պատժամիջոցներով¹⁸:

Մաքսատուրքերի դրույքաչափերից պարզ է դառնում, որ ԵԱՏՄ անդամակցությունից դուրս գալու դեպքում մի շարք հիմնական օգտագործվող ապրանքներ կլինեն ավելի մատչելի, սակայն արտահանման հետ կառաջանան խնդիրներ, որոնք հիմնականում կվերաբերվեն խոշոր բիզնեսին և մասամբ միջին ու փոքր տնտեսվարողներին հիմնականում գյուղատնտեսության ոլորտում: Մյուս կողմից ԵԱՏՄ-ի անդամակցությունը շարունակելու պարագայում կպահպանվի Հայաստանի ԵԱՏՄ-ից ստացվող մաքսային շահաբաժինը: Յուրաքանչյուր անդամ պետության համար ներմուծման մաքսատուրքերի բաշխման չափորոշիչները սահմանվում են հետևյալ չափերով.

Հայաստանի Հանրապետություն՝ 1.220 տոկոս;

Բելառուսի Հանրապետություն՝ 4,860 տոկոս;

Ղազախստանի Հանրապետություն՝ 6,955 տոկոս;

Ղրղզստանի Հանրապետություն՝ 1900 տոկոս;

Ռուսաստանի Դաշնություն՝ 85,065 տոկոս: Սա ամենալուրջ փաստարկն է ԵԱՏՄ-ի կազմում մնալու համար, քանի որ վերջին հասանելի տվյալներով 2021-ին ԵԱՏՄ-ի ներմուծուժները կազմել են 318.5 մլրդ ԱՄՆ դոլար և այս թվի Հայաստանի բաժինը¹⁹ կազմում է շուրջ 33 մլն ԱՄՆ դոլար:

Եզրակացություն: Ընդհանուր հաշվարկով մաքսատուրքերից ստացվող օգուտը ստացվում է ԵԱՏՄ այն անդամ երկրներից, որոնք ավելի մեծ գումարի ներկրում են, սակայն ստանում են համապատասխանողից քիչ գումար, համաձայն ԵԱՏՄ ներքին նորմատիվային կանոնադրություններով իրենց համար նախատեսված քվոտային տոկոսների: Ուստի ի հայտ է գալիս այսպիսի իրավիճակ, որում շահում է պետությունը՝ ստանալով մեծ եկամուտներ, շահում են մեծ տնտեսվարողները՝ ստանալով առանց մաքսատուրքերի մուտք ԵԱՏՄ շուկա, սակայն քաղաքացիները մի կողմից տուժում են ապրանքների թանկությունից: Գումարային առումով հարկ կլինի հաշվել, թե արդյոք Հայաստանը ստանում է այն 33 մլն ԱՄՆ դոլարից ավելի շատ գումար մաքսատուրքերից, եթե հետևի ԱՀԿ մաքսատուրքերի նորմային, թե ոչ, և ինչ պետք է արվի, որպեսզի դա այդպես լինի: Մասնավորապես 12.76 մլրդ ԱՄՆ դոլարի չափ ներկրումից առնվազն 33 մլն մաքսատուրք ստանալու համար պետք կլինի միջին կշռված հարկատուրքը 0.տոկոսից ավելին, ինչպես նաև փոխհատուցի ԵԱՏՄ շրջանակներում Հայաստանի ունեցած արտոնության կորուստը:

¹⁷ ՄԱԿ-ի «UN COMTRADE DATABASE» առցանց տվյալների բազա (<http://comtrade.un.org/data/>):

¹⁸ Постановление правительства РФ № 778 от 7 августа 2014г. о мерах по реализации Указа Президента Российской Федерации от 6 августа 2014 г. № 560 "О применении отдельных специальных экономических мер в целях обеспечения безопасности Российской Федерации."

¹⁹ <https://eec.eaunion.org/comission/departement/dofp/zachislenie/>

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արտաքին առևտրի բազա, անվանացանկի երկնիշ դասակարգման, Ինչպես նաև ԿԶՆ տվյալներ, անվանացանկերի քառանիշ տվյալների օգտագործում: Վերջին մուտք 07.05.2025թ. <https://armstat.am/am/>
2. ՄԱԿ-ի «UN COMTRADE DATABASE» առցանց տվյալների բազա (<http://comtrade.un.org/data/>): Договор о зоне свободной торговли от 18 октября 2011 года
3. Արսեն Ըոքոյան, 2022/1, «ՀՀ և տարածաշրջանային երկրների տնտեսական կարևոր գործոնների համեմատական վերլուծությունը», Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու էջ 119
4. Միսակ Ավագյան, 2016, Եվրասիական Տնտեսական Միության անդամ երկրների հետ Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական կապերի վերլուծությունը, Բանբեր <https://banber.eiu.am/index.php/banber/article/view/33/196>
5. 2014 года. Договор о присоединении Кыргызской Республики к Договору о Евразийском экономическом союзе от 29 мая
6. 2014 года, Приложение N 2 к Договору о присоединении Республики Армения к Договору о Евразийском экономическом союзе от 29 мая п.1:
7. 2008 года. Протокол О единой системе тарифных преференций таможенного союза от 12 декабря Решение Межгосударственного Совета Евразийского экономического сообщества (высшего органа таможенного союза) от 27 ноября 2009 г. №18. Решение Комиссии таможенного союза от 27 ноября 2009 года №130. Соглашение о единых правилах определения страны происхождения товаров от 25 января 2008 года. Соглашение о правилах определения происхождения товаров из развивающихся и наименее развитых стран от 12 декабря 2008 года. Портал внешнеэкономической информации Министерства экономического развития РФ, <http://www.ved.gov.ru/eng/activities/system/>
8. 2014 г. Постановление правительства РФ № 778 от 7 августа 2014г. о мерах по реализации Указа Президента Российской Федерации от 6 августа № 560 "О применении отдельных специальных экономических мер в целях обеспечения безопасности Российской Федерации."
9. Зачисление и распределение сумм ввозных таможенных пошлин ЕАЭС <https://eec.eaeunion.org/comission/departament/dofp/zachislenie/>
10. ТН ВЭД ЕАЭС и ЕТТ ЕАЭС <https://eec.eaeunion.org/comission/departament/catr/ett/>
11. В.И. Самаруха, 2019г., К ВОПРОСУ ОБ ЭКОНОМИЧЕСКОМ РАЗВИТИИ ЕАЭС, АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ЕАЭСВ УСЛОВИЯХ СОВРЕМЕННЫХ ГЛОБАЛЬНЫХ ИЗМЕНЕНИЙ, Материалы Всероссийской научно-практической конференции, Иркутск, 12 декабря էջ77 <http://www.sgal.bgu.ru/getfiles.ashx?p=Prep\00025000\00025901/%D0%9F%D0%B>

[E%D0%BB%D0%BD%D1%8B%D0%B9%20%D1%82%D0%B5%D0%BA%D1%81 %D1%82%D0%A1%D0%B1%D0%BE%D1%80%D0%BD%D0%B8%D0%BA%20 %D0%A4%D0%B5%D0%B4%D0%BE%D1%82%D0%BE%D0%B2.pdf](http://www.sgal.bgu.ru/getfiles.ashx?p=Prep\00025000\00025901/%D0%9F%D0%B E%D0%BB%D0%BD%D1%8B%D0%B9%20%D1%82%D0%B5%D0%BA%D1%81 %D1%82%D0%A1%D0%B1%D0%BE%D1%80%D0%BD%D0%B8%D0%BA%20 %D0%A4%D0%B5%D0%B4%D0%BE%D1%82%D0%BE%D0%B2.pdf)

12. К.А. Татарникова, 2019г., Повышение экономической безопасности стран еаэс посредством повышения финансовой безопасности с учетом мирового опыта, актуальные проблемы развития ЕАЭС в условиях современных глобальных изменений, Материалы Всероссийской научно-практической конференции, Иркутск, 12 декабря 2019г. <http://www.sgal.bgu.ru/getfiles.ashx?p=Prep\00025000\00025901/%D0%9F%D0%B E%D0%BB%D0%BD%D1%8B%D0%B9%20%D1%82%D0%B5%D0%BA%D1%81 %D1%82%D0%A1%D0%B1%D0%BE%D1%80%D0%BD%D0%B8%D0%BA%20 %D0%A4%D0%B5%D0%B4%D0%BE%D1%82%D0%BE%D0%B2.pdf>
13. Shepotylo, Oleksandr and Tarr, David G. (2012). "Impact of WTO Accession and the Customs Union on the Bound and Applied Tariff Rates of the Russian Federation," Policy Research Working Paper 6161, World Bank, Washington D.C.: United States, p.4, 24.
14. <http://cis.minsk.by/reestr/ru/index.html#reestr/view/text?doc=3183>

ՀՀ ԵԱՏՄ ԱՆՂԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՊՐԱՆՔԱՆՄԱԲԵՐԻ

ՀՄԱՅՈՒՆ ԵՄԲԵԼՈՒԹՅՈՒՆ

Համառոտագիր

Հայաստանի ԵԱՏՄ անդամակցության արդյունավետության մասին կան տարբեր մոտեցումներ, որոնք, որպես կանոն, չեն շոշափում տնտեսական բաղադրիչը և հիմնվում են քաղաքական պնդումների վրա: Այնուամենայնիվ ինչպիսի կարծիքներ էլ հնչեն այս փաստի վերաբերյալ, տնտեսական արդյունքները դրանից չեն փոխվում և անհրաժեշտ են տնտեսական այնպիսի հետազոտություններ, որոնք ցույց կտան ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցության տնտեսական նպատակահարմարությունը՝ ինչում կայանում է հոդվածի **արդիականությունը**:

Այս հետազոտության **նպատակն** է բացահայտել Հայաստանի ԵԱՏՄ անդամակցության տնտեսական արդյունքները և համեմատել որևէ միության չանդամակցելու իրավիճակի հետ, որպեսզի պարզվի իրական տնտեսական արդյունքը:

Այսինքն՝ վեր հանել արտաքին առևտրի բաղադրիչներ կազմող հիմնական ապրանքատեսակների ցանկը ըստ ԱՏԳ կոդերի, ուսումնասիրել և պարզել դրանց միջինացված մաքսատուրքերի չափերը, համեմատել այդ ապրանքատեսակների ԵԱՏՄ և ԱՀԿ մաքսատուրքերը և համեմատել ԵԱՏՄ-ից ստացվող մաքսատուրքերի Հայաստանին բաժին ընկնող մասի հետ ու կազմել նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն:

ԵԱՏՄ համագործակցությունը ստեղծեց նրա անդամ երկրների՝ Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, հետագայում նաև Ղրղզստանի հետ տնտեսական համագործակցության որակապես նոր փուլի մեկնարկի հնարավորություն, որը նախատեսում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժ անդամ երկրների միջև: Վերլուծության համար օգտագործվել են 2023թ.-ի ԵԱՏՄ երկրներ ներմուծման և արտահանման տվյալները, որոնք վերցվել են Հայաստանի վիճակագրական կոմիտեի հրապարակումներից:

ԵԱՏՄ երկրների հետ ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ ԵԱՏՄ-ին ՀՀ-ի ինտեգրման էֆեկտը թե՛ արտահանման, և թե՛ ներմուծման մասով կարելի է գնահատել դրական: Միևնույն ժամանակ առկա են ԵԱՏՄ անդամ առանձին երկրների հետ ապրանքաշրջանառության և արտահանման ապրանքային կառուցվածքի բազմազան նեցման հետ կապված խնդիրներ:

Բանալի քառեր. ԵԱՏՄ, ներմուծում, արտահանում, մաքսատուրք, ԱՀԿ, դրույքաչափեր, վերարտահանում, արտաքին առևտրի հավասարակշռություն:

ЧЛЕНСТВО РА В ЕАЭС ПО ТОВАРНЫМ ГРУППАМ

АМАЯК НАЛБАНДЯН

Аннотация

Существуют разные подходы к оценке эффективности членства Армении в ЕАЭС, которые, как правило, не затрагивают экономическую составляющую и базируются на политических претензиях. Однако какие бы мнения не высказывались по данному факту, экономические результаты от этого не меняются и необходимы экономические исследования, которые покажут экономическую целесообразность членства Армении в ЕАЭС, в чем и заключается актуальность статьи. Поэтому цель статьи — оценить, что и сколько на самом деле получила Армения от вступления в ЕАЭС с 2 января 2015 года.

Сотрудничество в рамках ЕАЭС создало возможность для запуска качественного нового этапа экономического взаимодействия с его государствами-членами — Россией, Беларусью, Казахстаном, а позднее и Кыргызстаном, предусматривающего свободное перемещение товаров, услуг, капитала и рабочей силы между государствами-членами. При анализе использовались данные об импорте и экспорте в страны ЕАЭС за 2023 год, взятые из публикаций Статистического комитета Армении.

Комплексный анализ внешнеторгового оборота Армении со странами ЕАЭС показывает, что эффект от интеграции Армении в ЕАЭС можно оценить как положительный как по экспорту, так и по импорту. В то же время существуют

проблемы, связанные с диверсификацией товарооборота и товарной структуры экспорта с отдельными странами-членами ЕАЭС.

Ключевые слова. ЕАЭС, импорт, экспорт, таможенная пошлина, ВТО, ставки, реэкспорт, внешнеторговый баланс.

MEMBERSHIP OF RA BY PRODUCT GROUPS

HMAYAK NALBANDYAN

Abstract

There are various perspectives on the effectiveness of Armenia's membership in the Eurasian Economic Union (EAEU), many of which are driven by political considerations rather than economic analysis. Regardless of these differing viewpoints, the economic consequences of membership remain measurable and require objective, data-driven evaluation. This underscores the relevance of the present study, which aims to assess the actual economic outcomes of Armenia's accession to the EAEU since January 2, 2015.

The EAEU framework has facilitated the launch of a qualitatively new stage of economic cooperation among its member states (Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan) by ensuring the free movement of goods, services, capital, and labor. This study analyzes Armenia's trade performance within the EAEU, with a particular focus on 2023 import and export data sourced from the RA Statistical Committee.

A comprehensive assessment of Armenia's foreign trade turnover with EAEU countries indicates a generally positive impact of integration, both in terms of export growth and import dynamics. Nevertheless, challenges remain regarding the diversification of trade flows and the product composition of exports to specific EAEU member states.

Keywords: Eurasian Economic Union (EAEU), imports, exports, customs duties, WTO, tariff rates, re-export, foreign trade balance.